



## ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

### 1. Հիմնական արժեքներ.

- Համապատասխանություն,
- Ճշգրտություն և հուսալիություն,
- Յուրաժամանակություն և ճշտապահություն,
- Փոխկապակցություն և համադրելիություն,
- Մատչելիություն և պարզություն,
- Գաղտնիություն,
- Դեպի սպառող կողմնորոշում,
- Հանրային թափանցիկ բանավեճ:

### **2017 թվականին ակնկալվող փոփոխություններ.**

ՀՀ վիճակագրական կոմիտեն (ՀՀ ՎԿ) շարունակելու է վիճակագրության միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանման համատեքստում վիճակագրության համակարգային վերափոխման գործընթացները՝ վիճակագրական տեղեկատվության սպառողների (հետայսու՝ սպառողներ) կարիքների առավել ամբողջական և օպերատիվ բավարարումը, տեղեկատվության տարածման և հաղորդակցության արդի միջազգային փորձի ներդրումը:

Հաշվի առնելով արդի հասարակության հետ երկխոսության և շփման ժամանակակից գործիքները, ՀՀ ՎԿ-ն ակտիվացնելու է սոցիալական ցանցերի միջոցով վիճակագրական տեղեկատվության տարածման գործընթացը (մասնավորապես՝ ֆեյսբուքյան էջով):

Եվրամիության «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» ԹՎԻՆԻՆԳ ծրագրի բաղադրիչ հանդիսացող «Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ»-ի շրջանակում ՀՀ ՎԿ [www.armstat.am](http://www.armstat.am) պաշտոնական կայքում զետեղվելու է մշակման փուլում գտնվող «Հաճախ տրվող հարցեր» առցանց տեղեկատվական ծառայությունը, որը բաղկացած է լինելու սպառողին առավել հետաքրքրող 20 հարցից (դրանք են. բնակչության թվաքանակ և բնական աճ, միգրացիա, համախառն ներքին

արդյունք, գյուղատնտեսական մթերքի իրացում, սպառողական գների ինդեքս, գործազրկության մակարդակ, միջին ամսական անվանական աշխատավարձ, արտաքին պետական պարտք, բնակչության ավանդներ, արտահանում, ներմուծում, աղքատության մակարդակն ըստ տնային տնտեսության չափի, նվազագույն սպառողական զամբյուղ, զբոսաշրջություն, ինտերնետ հասանելիություն, տնային տնտեսությունների դրամական եկամուտների, սպառողական ծախսերի կազմը և դրանց կառուցվածքը, փոքր և միջին ձեռնարկատիրություն, անշարժ գույքի շուկա, սոցիալական ոլորտ (կրթություն, իրավախախտումներ, առողջապահություն, մշակույթ)): Այդ ծառայությունը հնարավորինս արագ և դյուրին ընթացակարգով կնպաստի սպառողի վիճակագրական կարիքների բավարարմանը:

Ընդլայնվելու է տվյալների թվայնացումը, որը ենթադրում է վիճակագրական տեղեկատվության տարածման և հաղորդակցության կատարելագործում: Այդ գործընթացը պետք է կազմակերպել առավելագույն զգուշությամբ և նրբանկատությամբ, որ երբևիցե չխախտվի վիճակագրության հանդեպ տեղեկատվություն տրամադրողների և սպառողների վստահությունը՝ հիմնվելով Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի սկզբունքների վրա (հիմնականում՝ տեղեկատվության որակի ապահովման պարտավորություն, անաչառություն և օբյեկտիվություն, յուրաժամանակություն և ճշտապահություն, արդյունավետություն, արդիականություն, ճշգրտություն և հուսալիություն, փոխկապակցություն և համադրելիություն, մատչելիություն և պարզություն, մեթոդաբանության հիմնավորվածություն և այլն):

Արդյունքում, սպառողների մշտապես աճող և փոփոխվող կարիքներն իրենց հետ բերելու են ճկուն և ակնկալվող վիճակագրության ներդրում՝ նույնիսկ ֆինանսական միջոցների սղության պայմաններում:

## **1. Ծառայություններ**

ՀՀ ՎԿ-ն, արտադրելով պաշտոնական վիճակագրություն, կազմակերպում է տնտեսական և հասարակական գործընթացների ու դրանց արդյունքների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության մշակում և սահմանված կարգով հանրությանը վիճակագրական տեղեկատվությամբ ապահովում:

2017 թվականից սկսած ՀՀ ՎԿ-ն գրեթե ամբողջությամբ կտրուկ անցում է կատարելու թղթային հրապարակումներից էլեկտրոնայինի (բացառությամբ՝ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) վիճակագրական ժողովածուից):

ՀՀ ՎԿ պաշտոնական կայքերը (<http://www.armstat.am> <http://www.armstatbank.am> և <http://www.armdevinfo.am>) հիմնական կապուղի են սպառողների հետ: Դրանք վիճակագրության համապարփակ հարթակներ են, որոնցում առկա է ՀՀ ՎԿ պաշտոնական վիճակագրությունը, ինչպես նաև ՀՀ ՎԿ-ից դուրս արտադրված վարչական և միազգային վիճակագրությունները: Պաշտոնական վիճակագրությունը բարելավվում է, երբ ողջ տեղեկատվությունը հավաքագրվում է մեկ միասնական պորտալի մեջ, ուստի նախատեսվում է բոլոր վիճակագրական բազաները մեկտեղել են մեկ միասնական շտեմարանում: Արդյունքում, սպառողը «մեկ կոճակի հպումով» մուտք է գործելու իրեն անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվության «անեզր տիրույթ»:

ՀՀ ՎԿ-ն շարունակելու է ապահովել վիճակագրական տվյալների արժանահավատությունը, ճշգրտությունը, համադրելիությունը, գաղտնիությունը, արդիականությունը, կայունությունը և ամբողջականությունը, ինչպես նաև վիճակագրական տվյալների պարբերական հրապարակումը, տարածումը, հաղորդակցությունը և հասանելիությունը:

ՀՀ ՎԿ-ն սպառողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա բավարարելու է նրանց վիճակագրական կարիքները, ուստի դրանց առավել հստակ իմացությունը և դրանք նկատելու ունակությունը տեղեկատվության տարածման և հաղորդակցության տեսլականին հասնելու հիմնական նախապայմանների առաջնային շարքում է:

2017 թվականին ՀՀ ՎԿ-ի կողմից պաշտոնական կայքում գործելու է սպառողների բավարարվածության ուսումնասիրության թարմացված և վերանայված հարցաթերթը, որը հնարավորություն կընձեռի հետագայում առավել մանրամասն և լայնամասշտաբ կատարել սպառողների կարիքների ուսումնասիրություն, իսկ դրա հիման վրա բարելավել արդեն իսկ մատուցվող ծառայությունները:

2017 թվականին ՀՀ ՎԿ-ն երկխոսություններին և հանրային քննարկումներին ավելի ակտիվորեն է ներգրավելու նաև վարչական ռեզիստորների ներկայացուցիչներին, քանզի նրանց ներկայությունը և մասնակցությունը կարող է ավելացված արժեք տալ թե՛ վիճակագրությանը և թե՛ սպառողին:

2017 թվականին շարունակվելու են հանդիպում-երկխոսությունները սպառողների թիրախային խմբերի (օրինակ՝ հասարակական կազմակերպությունների, ահեստակցական միությունների, տարբեր հանձնաժողովների ներկայացուցիչների) հետ: Արդյունքում, սպառողներն ավելի տեղեկացված կլինեն ՀՀ ՎԿ գործունեության մասին և կկարողանան ճիշտ օգտագործել ՀՀ ՎԿ կողմից հրապարակված տեղեկատվությունը:

Լրատվամիջոցները և հետազոտություններ իրականացնողները սպառողների հիմնական թիրախային խմբերից են: ՀՀ ՎԿ-ն կարևորելով նրանց կարիքները ևս, հետամուտ է լինելու դրանց բավարարմանը:

**ՀՀ ՎԿ-ն բարելավելու է տարածման ռազմավարությունը.**

**ա. Հարմարվել սպառողների նոր և փոփոխվող կարիքներին,**

- նախապես հայտարարել որևէ ցուցանիշի հրապարակման ամսաթվի ուշացման, փոփոխման կամ չհրապարակման մասին, իսկ հետաձգման դեպքում՝ պաշտոնական կայքում տեղադրել հայտարարություն,
- վիճակագրական հրապարակումներում նախնական, հաշվարկային կամ վերանայված ցուցանիշների ճշգրտման դեպքում տալ համապատասխան ծանոթացում և/կամ ավելացնել ճշգրտման նշան (◇),
- վիճակագրական հրապարակումներում հնարավոր սխալների հայտնաբերման դեպքում ուղղումները կատարել հնարավորինս արագ և հրապարակել ՀՀ ՎԿ պաշտոնական կայքում այնպես, որ հստակորեն երևա, թե փաստացի ինչն է ուղղվել,
- սպառողի համար ստեղծել տվյալների միասնական բազա, որտեղ հնարավորինս պետք է խմբավորված լինեն բոլոր առկա բազաները,
- զարգացնել նոր և գոյություն ունեցող վիճակագրությունը:

**բ. Ավելացնել թափանցիկություն հանրային քննարկումներում.**

- խորացնել զանգվածային լրատվամիջոցների հետ համագործակցությունը/ հաղորդակցումը՝ ՀՀ ՎԿ կողմից սոցիալ-տնտեսական միտումների վիճակագրության ներկայացման միջոցով,
- կազմակերպել սպառողների հետ հանդիպումներ, որտեղ պետք է քննարկել ընտրված արդիական թեմաները,
- մշակել արտաքին և ներքին սպառողի ուսուցման տարեկան ծրագիր՝ համապատասխան թեմաներով և թիրախային խմբերի ներգրավմամբ,
- բարելավել վիճակագրության տարածումը և հաղորդակցումը:

**դ. Խորացնել սպառողների տարբեր խմբերի հետ համագործակցությունը.**

- ուսումնասիրել և տեղայնացնել միջազգային փորձը,
- հնարավորություններ ստեղծել միջազգային փորձի փոխանակման արդյունքում ձեռքբերված նոր գիտելիքների տարածման համար,
- ընդլայնել դպրոցների, բարձրագույն ուսումնական, գիտակրթական և գիտահետազոտական հաստատությունների ներկայացուցիչների հետ համագործակցությունը,

- խորացնել և ամրապնդել պետական կառավարման մարմինների, ֆինանսական կազմակերպությունների, գործարար համայնքի, քաղաքացիական հանրության և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունները:
- որպես 2017 թվականի հիմնական ձեռքբերում պլանավորվում է նոր հրապարակում՝ «Վիճակագրությունը դպրոցականների համար» գրքույկ-ձեռնարկը (հայերեն, անգլերեն), որը վիճակագրությունը հասանելի կդարձնի նաև դպրոցահասակների համար:

**ե. Արդիականացնել պաշտոնական վիճակագրության պորտալը.**

- ստեղծել նոր թեմատիկ վիճակագրական մուտքեր,
- հրապարակումների և/կամ տվյալների բազաների մեջ դյուրին որոնման հնարավորություն ընձեռել սպառողներին,
- ապահովել առավել ճկուն որոնման կարողություն,
- սպառողի ինքնասպասարկման տեսանկյունից տեղեկատվության տարածման և հաղորդակցման գործընթացում առաջնահերթությունը տալ [www. armStatB ank. am](http://www.armStatB ank.am) կայքին,

**զ. 2017 թվականին շարունակաբար իրականացնել ՀՀ 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման (ՀՀ ԳՀՀ) տվյալների հրապարակման և տարածման ռազմավարությունը (տես՝ ՀՀ ՎԿ պաշտոնական կայքի <http://www.armstat.am/am/?nid=680> հղումը)**

- շարունակական սկզբունքով վիճակագրական տեղեկատվության սպառողներին տրամադրել ՀՀ 2014 թվականի ԳՀՀ ամփոփ արդյունքները,
- վիճակագրական տեղեկատվության սպառողների շրջանում պահպանել հետաքրքրությունը ՀՀ 2014 թվականի ԳՀՀ արդյունքների նկատմամբ՝ պարբերաբար տարածելով տարաբնույթ վիճակագրական տեղեկատվություն:

**2. Գործընթացների զարգացում.**

- «Պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրի» նախագիծը կազմելիս խորացնել և ընդլայնել վիճակագրական տեղեկատվություն տրամադրողների և սպառողների կարծիքի ու պահանջմունքների ուսումնասիրումը, վարել դրանց իրականացման մշտադիտարկում,
- կանխատեսել սպառողների հետագա պահանջները, արագ արձագանքել դրանց, տեղեկատվությունը մշակել և տրամադրել սպառողին իրեն հարմար եղանակով,

- սպառողների խմբերի (մասնավորապես՝ թիրախային) հետ հաստատել արդյունավետ կապեր՝ նրանց մշտապես տեղեկացնելով վիճակագրական նորությունների մասին,
- ապահովել մամուլի ասուլիսների, հարցազրույցների, ճեպագրույցների հաճախակի կազմակերպումը,
- շարունակել ակտիվորեն պատասխանել լրատվամիջոցների հարցումներին՝ խուսափելու ապատեղեկատվությունից և թյուրըմբռումներից, իսկ նման դեպք բացահայտելիս հնարավորինս կարճ ժամանակահատվածում կապ հաստատել հոդվածագրի հետ և խնդրել, որ նա շտկումներ մտցնի իր հրապարակման մեջ,
- սպառողների կարիքների ուսումնասիրությունների և հարցումների արդյունքում բացահայտել նրանց կարիքները, խնդիրները և նպատակները,
- մշտադիտարկել ՀՀ ՎԿ գործունեության լուսաբանումը, վերլուծել վիճակագրությանն առնչվող լրատվամիջոցների հրապարակումները և անհրաժեշտության դեպքում արձագանքել դրանց,

-

### **3. Տվյալների գաղտնիության ապահովում.**

Վիճակագրական տեղեկատվության գաղտնիությունն ապահովվում է ըստ «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, համաձայն որի ՀՀ ՎԿ-ն երաշխավորում է իրեն տրամադրված վիճակագրական տվյալների գաղտնիությունը և պաշտպանվածությունը:

Վիճակագրական գաղտնիք պարունակող տվյալները բացառիկ դեպքում կարող են տրամադրվել կամ հրապարակվել անհատական (անվանական) տվյալների ուղղակի բացահայտման հնարավորություն չտվող ձևով և մասով՝ գիտահետազոտական աշխատանքների իրականացման նպատակով՝ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի որոշմամբ:

Բոլոր տվյալները, որ հրապարակում է ՀՀ ՎԿ-ն և այն տվյալները, որոնք տրամադրվում են սպառողների պահանջներին համապատասխան, ներկայացվում են ազրեգացված ձևով:

#### 4. Ակնկալվող (սպասվող) փոփոխություններ

- Ֆեյսբուքյան էջի ակտիվացում,
- թղթային հրապարակումներից անցում բացառապես էլեկտրոնային հրապարակումների,
- սպառողների բավարարվածության ուսումնասիրության թարմացված և վերանայված հարցաթերթ,
- հանդիպում-երկխոսությունները սպառողների թիրախային խմբերի հետ,
- «Վիճակագրությունը դպրոցականների համար» ձեռնարկի հրապարակում,
- վիճակագրության տարածման և հաղորդակցության շարունակական բարելավում,
- վիճակագրության տարածման և հաղորդակցության ռազմավարության գործարկում,
- պաշտոնական վիճակագրության պորտալի արդիականացում,
- սպառողների նոր և փոփոխվող կարիքների առավել ամբողջական բավարարում,
- հանրային քննարկումներում թափանցիկության ապահովում,
- սպառողների խմբերի ներգրավմամբ վիճակագրական ուսուցման տարեկան ծրագրի հետևողական գործարկում: